Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2022 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ ՍՈՑԻԱԼ.ԱՌՈՂ.ՀԻՄ.»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ ՍՈՑԻԱԼ.ԱՌՈՂ.ՀԻՄ.
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Խորենացու 112
1.3 Պետական գրանցման համարը		164/1
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2001-01-03
1.5 ՀՎՀՀ-ն		02512386
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99415413
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.arznikurort.am
1.8 Էլեկտրոնային փոստը		agnesya.pogosyan@mail.ruil.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Էդուարդ Թումասյան		
Խաչիկ Առաքելյան		
Հասմիկ Ջհանգիրյան		
Սիլվա Հարությունյան		
Կարինե Ալոյան		
Կարինե Ավետիսյան		
Գագիկ Ղարիբյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գագիկ Մաղոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	27	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	առողջարանային բուժ սպասարկում	26,626,243

	վարձակալություն	7,485,644
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	առողջարանային բուժ սպասարկում՝	39,435,410
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
առողջարանային բուժ սպասարկման ծախսեր	70,069,300	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	70,069,300	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	70,069,300	

Նշումներ՝

Հաշվետվությանը կցված աուդիտի հետ ներառված է նաև հայաստանի կուրորտներ սոցիալական առողջապահական հիմնադրամի2021թ-ի աուդիտի կողմից հաստատված ֆինասական հաշվետվությունը;

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___30___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐՈՐՏՆԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Գրանցված է ՀՀ Արդարադատության Նախարարի թիվ 17 հրամանով, 03.01.2001 թ.
Կանոնադրության նոր խմբագրությունը գրանցված է 18.02.2008 թ.
Գրանցման վկայական 03 Ա 060690
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Կուրորտ Արզնի

Բովանդակություն

Ղեկավարության հայտարարությունը 3
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 7
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 9
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 12
1. Ընդհանուր տեղեկություններ 12
2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը 14
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը 17
4. Հիմնական միջոցներ 25
5. Ոչ նյութական ակտիվներ 25
6. Ապրանքանյութական պաշարներ 25
7. Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ 25
8. Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ 26
9. Դրամական միջոցներ 26
10. Սեփական կապիտալի տարրեր 26
11. Ստացված փոխառություններ 26
12. Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ 26
13. Հասույթ 27
14. Իրացման ծախսեր 27
15. Կառավարման և վարչական ծախսեր 27
16. Հարկեր 27
17. Փոխկապակցված գործարքների բացահայտում 28
18. Պայմանական պարտավորություններ 28

Ղեկավարության հայտարարությունը 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ

Ղեկավարությունը պատասխանատու է «Հայաստանի Կուրորտներ» Սոցիալական-Առողջապահական Հիմնադրամի (հետագայում նաև Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների, որոնք ներառում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը, և սեփական կապիտալում փոփոխությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի և Մեկնաբանման Կոմիտեի կողմից հաստատված Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ նաև ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել նրա գործունեությունը, կամ եթե չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն Հիմնադրամի ֆինանսական վիճակի, տեղի ունեցած որոշակի գործարքների և իրադարձությունների ազդեցության մասին,
- Հիմնադրամի գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- ✓ Հիմնադրամում ներքին վերահսկողության արդյունավետ և ողջամիտ համակարգ մշակելու, ներդնելու և պահպանելու համար,
- ✓ համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Հիմնադրամի գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Հիմնադրամի ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն ղեկավարությանը հավաստիանալու, որ Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՓՄԿ ՖՀՄՍ-ներին,
- ✓ ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- ✓ Հիմնադրամի ակտիվների անվտանգության ապահովման ուղղությամբ խելամիտ քայլերի իրականացման համար, և
- ✓ խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները Հիմնադրամի ղեկավարության կողմից հաստատված են 2022թ. հունիսի 8-ին:

Ստորագրված է «Հայաստանի Կուրորտներ» Սոցիալական-Առողջապահական Հիմնադրամի ղեկավարության կողմից / անունից:

Գլխավոր տնօրեն
Գ. Մաղոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

Կ. Տ.

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՄՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Կուրորտներ» Սոցիալական-Առողջապահական Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների Խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի Կուրորտներ» Սոցիալական-Առողջապահական Հիմնադրամի (այսուհետ նաև Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ նաև ՓՄԿ ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք հնարավորություն չենք ունեցել իրականացրել Հիմնադրամի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվների՝ հիմնական միջոցների և ապրանքանյութական պաշարների գույքագրում: Հիմնադրամի գործունեության բնույթից և համավարակի սահմանափակումներից ելնելով մենք հնարավորություն չենք ունեցել այլընտրանքային ընթացակարգերի միջոցով ձեռք բերել դրանց վերաբերյալ բավականաչափ աուդիտորական ապացույցներ՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ նաև ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (այսուհետ նաև ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Ի լրումն «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի՝ մենք որոշել ենք, որ այլ առանցքային հարցեր չկան:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՍՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

8 հունիսի, 2022 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	445,666	450,224
Ոչ նյութական ակտիվներ	5	80	100
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*445,746*	*450,324*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքանյութական պաշարներ	6	77,528	79,883
Դեբիտորական պարտքեր	7	220,708	214,550
Տրված կանխավճարներ և այլ ընթացիկ ակտիվներ	7	-	139
Դրամական միջոցներ	9	5,937	1,262
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*304,173*	*295,834*
Ընդամենը ակտիվներ		**749,919**	**746,158**
Կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ			
Չբաշխված շահույթ	10	23,872	21,020
Ընդամենը սեփական կապիտալ		**23,872**	**21,020**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	430,206	430,206
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*430,206*	*430,206*
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ փոխառություններ	11	300	3,963
Կրեդիտորական պարտքեր	8	6,220	1,648
Ստացված կանխավճարներ		-	-
Եկամուտներին վերաբերվող շնորհներ	12	289,321	289,321
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*295,841*	*294,932*
Ընդամենը պարտավորություններ		**726,047**	**725,138**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**749,919**	**746,158**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Գ. Մաղոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

8 հունիսի, 2022 թ.

Կ. Տ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Հասույթ	13	73,547	40,295
Այլ եկամուտներ		-	-
Ընդամենը եկամուտներ		**73,547**	**40,295**
Ծախսեր			
Իրացման ծախսեր	14	(19,332)	(10,640)
Կառավարման և վարչական ծախսեր	15	(50,737)	(44,691)
Այլ ծախսեր		-	-
Ընդամենը ծախսեր		**(70,069)**	**(55,331)**
Զուտ եկամուտ (վնաս)		**3,478**	**(15,036)**
Ֆինանսական եկամուտներ		-	-
Ֆինանսական ծախսեր		-	-
Ֆինանսական գործունեության արդյունք		**-**	**-**
Տարվա զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկը		**3,478**	**(15,036)**
Շահութահարկ		(626)	-
Տարվա զուտ շահույթ (վնաս)		**2,852**	**(15,036)**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Գ. Մաղոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

8 հունիսի, 2022 թ. Կ. Տ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Կուտակված շահույթ կամ չծածկված վնաս	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	36,056	36,056
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	(15,036)	(15,036)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,020	21,020
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	21,020	21,020
Ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունք	2,852	2,852
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,872	23,872

Digitally signed by POGHOSYA
8012590131
Date: 2022.06.30 09:56:05 AM

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Գ. Մաղոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

8 հունիսի, 2022 թ.

Կ. Տ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	9	1,262	18,116
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր մատուցված ծառայություններից		72,486	32,043
Այլ մուտքեր		293	140
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*72,779*	*32,183*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Ձեռքբերված ապրանքների դիմաց		3,047	3,068
Կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց		29,611	22,110
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ		21,295	19,515
Սոցիալական ապահովագրության վճարումներ		-	87
Հարկերի վճարում		10,488	8,220
Այլ ելքեր գործառնական գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*64,441*	*53,000*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**8,338**	**(20,817)**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների իրացում		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		-	-
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		-	-
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		-	-

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների ստացում		1,595	4,963
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*1,595*	*4,963*
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների մարում		5,258	1,000
Տոկոսների վճարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		*5,258*	*1,000*
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(3,663)	3,963
Դրամական միջոցների փոփոխություն		4,675	(16,854)
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		-	-
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	9	5,937	1,262

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գլխավոր տնօրեն
Գ. Մարոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

8 հունիսի, 2022 թ.

Կ. Տ.

Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 Իրավական կարգավիճակը

«Հայաստանի Կուրորտներ» Սոցիալական-Առողջապահական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է 2001 թ-ին Հայաստանի արհմիությունների կուրորտների խորհրդի վերակազմավորման արդյունքում: Հիմնադրամի հիմնադիրն է հանդիսացել «Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա» արհեստակցական կազմակերպությունների հանրապետական մջությունը:

Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Կուրորտ Արզնի:

Հիմնադրամի նպատակներն է՝ զարգացնել Հայաստանում առողջարանային բուժումը և կուրորտային գործունեությունը:

Հիմնադրամի շահառուներն են՝ առողջարաններում ու հանգստյան տներում բուժման և հանգստի կարիք ունեցող ֆիզիկական անձինք , ինչպես նաև առողջարաններն ու հանգստյան տները շահագործող իրավաբանական անձինք:

Հիմնադրամը անձամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով.

- ✓ մարդկանց առողջարանային բուժման ու հանգստի կազմակերպում,
- ✓ առողջարաններին ու հանգստյան տներին բնական բուժիչ ջրերի ու նյութատեխնիկական մատակարարման կազմակերպում,
- ✓ ռեստորանային գործունեություն:

Հիմնադրամի հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

1.2 Արտաքին միջավայրը և Հիմնադրամի գործունեությունը

Հիմնադրամը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում և նրա գործունեության վրա ուղղակի ազդեցություն ունեն Հայաստանի տնտեսական վիճակը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը հաճախ բացասական ազդեցություն են ունենում Հայաստանի ներդրումային միջավայրի և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Հիմնադրամի ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, օրենսդրական և աշխարհաքաղաքական փոփոխությունները, որոնք բոլորն էլ ունեն ակտիվների գնահատման, ներդրողների ընդհանուր տրամադրվածության և որոշումների կայացման վրա ուղղակի ազդեցություն: Այս ամենը դուրս է Հիմնադրամի վերահսկողությունից:

Այս ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ ակտիվ փուլում է գտնվում Ռուս-Ուկրաինական հակամարտությունը: Արդեն պարզ է որ այն մեծ ազդեցություն կունենա ոչ միայն տարածաշրջանի այլ ամբողջ աշխարհի վրա: Այն չի շրջանցի նաև Հայաստանը:

Ռուսաստանի Դաշնության նկատմամբ միջազգային պատժամիջոցներն ու սահմանափակումները կարող են պատճառ հանդիսանալ ՀՀ-ում գործող կազմակերպության գործունեության խաթարման համար, եթե նրա բաժնետերերի, մասնակիցների, կամ գործընկերների նկատմամբ կիրառվեն այդ պատժամիջոցները:

Ռուսաստանում կամ Ուկրաինայում գործող ընկերությունների հետ ակտիվ գործառնական, տնտեսական և առևտրային կապեր ունեցող կազմակերպությունները պետք է հաշվի առնեն ներքոնշյալ հնարավոր ռիսկերը.

- առևտրական ու տնտեսական գործունեության սահմանափակումներ,
- մատակարարումների ընդհատում,
- ակտիվների արժեզրկում,
- իրական արժեքի որոշում,
- լրացուցիչ ֆինանսավորում ձեռք բերելու հետ կապված դժվարություններ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Ղեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր ապագա զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տնտեսության վրա: Հետևաբար չի կարող կանխատեսել նաև դրանց հետևանքային ազդեցությունը Հիմնադրամի զուտ ակտիվների արժեքի փոփոխության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը Հիմնադրամի գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատումներից:

Տես նաև ծանոթագրություն 18:

2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (այսուհետ նաև ՀՀՄՍԽ) և Մեկնաբանման կոմիտեի (այսուհետ նաև ՄԿ) կողմից հաստատված Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ նաև ՓՄԿ ՖՀՄՍ) համաձայն:

Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ ՖՀՄՍ-ի համաձայն ներկայացնելու նպատակով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացվել են լրացուցիչ բացահայտումներ:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է Հիմնադրամի՝ 2021 թ-ի դեկտեմբերի 31-ի և 2020 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (համեմատական ամենավաղ տեղեկատվություն) ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս:

Հիմնադրամն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՓՄԿ ՖՀՄՍ-ի համաձայն պատրաստելիս կիրառել է հետևյալ մոտեցումները.

- ✓ չի ճանաչել հողվածները որպես ակտիվ կամ պարտավորություն, եթե ՓՄԿ ՖՀՄՍ-ով թույլ չի տրվում այդպիսի ճանաչում,
- ✓ ճանաչել է այն ակտիվներն ու պարտավորությունները, որոնց ճանաչումը պահանջվում է ՓՄԿ ՖՀՄՍ-ով,
- ✓ ՓՄԿ ՖՀՄՍ-ն կիրառվել է բոլոր ճանաչված ակտիվները և պարտավորությունները չափելիս:

ՓՄԿ ՖՀՄՍ-ով ֆինանսական վիճակի մասին սկզբնական հաշվետվության պատրաստման նպատակով ճշգրտումներ չեն կատարվել:

2.3 Ղեկավարության գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ների պահանջով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Հիմնադրամի ղեկավարությունը կատարում է գնահատումներ, կանխատեսումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Այդ դատողությունները կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների ակտիվների ու պարտավորությունների չափման ժամանակ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից:

Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ՝ իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով, կամ բացահայտել դրանց իրական արժեքը ֆինանսական հաշվետվություններում:
Հիմնադրամի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի:

1. Նույնական ակտիվի կամ պարտավորության համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);
2. Ուղղակի կամ անուղղակի դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1. կետում ներառվող գնանշվող գներից;
3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ՝ շուկայական տվյալների վրա չհիմնված:

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը հիմնվում է ամենացածր արժեքի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման գործում: Հաշվապահական գնահատումների արդյունքները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք տեղի են ունենում:

2.4 Գործառնական և հաշվետվությունների ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետությունում գործառնական արժույթը ՀՀ դրամն է, որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը:
Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով: Ղեկավարության համոզմամբ՝ այն լավագույնս է արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձություններն ու գործարքների տնտեսական էությունը և ամենահարմարն է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:
ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.5 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Հիմնադրամը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանձին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր և վերանայված ստանդարտների կիրառման ազդեցությունը կրում է զուտ ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն այս նոր և վերանայված ստանդարտների կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարեն համապատասխան բացահայտումներ:

Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և արդեն ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարկվել են ՀՀՄՄԽ-ՄԿ-ի կողմից: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ ՀՀՄՄԽ կողմից գործող ստանդարտների վերաբերյալ թողարկված, սակայն դեռևս չգործող որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից: Որոշ այլ նոր թողարկված ստանդարտներ և մեկնաբանություններ գործում են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան: Հիմնադրամի ղեկավարությունը կանխատեսում է, որ ապագա բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

3.1 Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված կազմակերպություններում ներդրումներից շահաբաժինների եկամուտը ճանաչվում է, երբ հաստատվում է Հիմնադրամի՝ վճարումներ ստանալու իրավունքները: Այն ներառված է այլ եկամուտներում:

3.2 Հասույթի ճանաչումը

Հիմնադրամը իր կանոնադրական նպատակների իրականացման շրջանակներում մատուցվող ծառայություններից կարող է ունենալ հասույթ, որը ճանաչվում է, երբ Հիմնադրամը կատարել է աշխատանքները, և ծառայություններ ստացողը ճանաչում է դա: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք իրական արժեքով՝ զտված զեղչերից և իրացման հետ կապված հարկերից:

Մատուցված ծառայություններից (եթե կան այդպիսիք) ստացված հասույթը ճանաչվելու է, երբ բավարարվեն հետևյալ պայմանները.

- Հիմնադրամը գնորդին է փոխանցել աշխատանքների արդյունքները և դրանց հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը,
- Հիմնադրամը չի պահպանում կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանականությունը մեծ է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

3.3 Փոխառության ծախսեր

Փոխառության բոլոր ծախսերը ճանաչվում են այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում տեղի են ունեցել այդ ծախսերը:

3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման կամ կառուցման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն վերադարձման, և այդ հիմնական միջոցին ուղղակիորեն վերագրվող այլ ծախսումները:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ըստ դասերի՝ հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները 2020 և 2021 ֆինանսական տարիների համար հետևյալն են.

Շենքեր	-	10-20 տարի
Սարքավորումներ	-	8-10 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5-10 տարի
Այլ	-	5-10 տարի

Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ակտիվի մաշվածության դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա տվյալ ակտիվի մաշվածությունը վերանայվում է այնպես, որ ապագայում ճիշտ արտացոլի նոր ակնկալիքները:

Հիմնական միջոցի վրա կատարված ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այդ հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները՝ ներառյալ վերանորոգման ու պահպանման, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում դրանց կատարման ժամանակաշրջանում: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ վերանորոգման ծախսերը կապիտալացվում են և հիմնական միջոցների կազմում ներկայացվում են առանձին դասով: Դրանց նկատմամբ հաշվարկվում է մաշվածություն, օգտակար ծառայության ժամկետ է հանդիսանում վարձակալության ժամկետը:

3.5 Ներդրումային գույք

Ակտիվը՝ հողը կամ շենքը, որը պահվում է սեփականատիրոջ մոտ կամ ֆինանսական վարձակալության դեպքում՝ վարձակալի մոտ, ճանաչվում է որպես ներդրումային գույք՝ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով:

Ներդրումային գույքն առաջացնում է դրամական միջոցների հոսքեր, որոնք մեծապես անկախ են Հիմնադրամի կողմից պահվող այլ ակտիվներից:

Հիմնադրամի ներդրումային գույքը, որի իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել՝ առանց անհարկի ծախսումների, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ չափվում է իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում: Մնացած դեպքերում Հիմնադրամն իր ներդրումային գույքը հաշվառում է որպես հիմնական միջոց՝ կիրառելով ինքնարժեք - մաշվածություն - արժեզրկում մոդելը:

Գնված ներդրումային գույքի ինքնարժեքը ներառում է դրա գնման գինը և ուղղակիորեն վերագրելի ցանկացած ծախսում:

Ներդրումային գույքի (բացառությամբ այն գույքի, որը համապատասխանում է վաճառքի համար պահվող դասակարգվելու չափանիշին) մաշվածությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը:

Ներդրումային գույքի օգտակար ծառայության ժամկետը համընկնում է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի հետ:

3.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի այնպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

3.7 Վարձակալություններ

Հիմնադրամը առաջնորդվում է ՓՄԿ ՖՀՍՍ-ների 20-րդ բաժնի պահանջներով, որի հիմքում դրված է ՀՀՍՍ 17-ը: Ներկայումս ՀՀՍՍ 17-ը փոխարինվել է ՖՀՍՍ 16-ով:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական բոլոր այն դեպքերում, երբ փոխանցվում են վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մնացած բոլոր վարձակալությունները դասակարգված են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները ճանաչվում են որպես ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով (կամ եթե ավելի ցածր է, նվազագույն վարձավճարների ներկա արժեքով)՝ վարձակալության սկզբի դրությամբ: Վարձատուի նկատմամբ ունեցած համապատասխան ֆինանսական պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն: Վարձավճարները հավասարապես բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները պահվում են շահույթի կամ վնասի չափումից: Ֆինանսական վճարները ներառված են հիմնական միջոցների մեջ, որոնք մաշվում և գնահատվում են ճիշտ այնպես, ինչպես սեփական ակտիվները:

Գործառնական վարձակալության շրջանակներում վճարվելիք վարձավճարները հաշվվում են շահույթում կամ վնասում՝ վարձակալության տևողության նկատմամբ գծային հիմունքով:

3.8 Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների սկզբնական արժեքը ներառում է պաշարների ձեռքբերման և արտադրման ծախսերը, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին ու գտնվելու վայր հասցնելու հետ կապված այլ ծախսերը: Անավարտ և պատրաստի արտադրանքի դեպքում սկզբնական արժեքը ներառում է նաև արտադրական վերադիր ծախսեր:

Իրացման զուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) և վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում այդ ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումները այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

Յուրաքանչյուր հաջորդող ժամանակաշրջանում կատարվում է իրացման զուտ արժեքի նոր գնահատում: Երբ պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք իջեցման նախկին հանգամանքներն այլևս գոյություն չունեն, կամ երբ տնտեսական իրավիճակի փոփոխության արդյունքում առկա է հստակ վկայություն իրացման զուտ արժեքի բարձրացման վերաբերյալ, իջեցված գումարը հակադարձվում է այնպես, որ նոր հաշվեկշռային արժեքը հանդիսանա ինքնարժեքից և վերանայված իրացման զուտ արժեքից նվազագույնը (այսինքն՝ հակադարձումը սահմանափակված է սկզբնապես իջեցված գումարով):

Հիմնադրամը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով «Ապրանքանյութական պաշարների փչացման և հնացման» պահուստ:
Հիմնադրամը պաշարների ինքնարժեքը որոշում է՝ կիրառելով «Առաջինը մուտք - առաջինը ելք (ԱՄԱԵ)» բանաձևը: ԱՄԱԵ բանաձևով յուրաքանչյուր ապրանքային հոդվածի իրացման ինքնարժեքը որոշվում է համապատասխան ապրանքանյութական պաշարի հոդվածի ձեռքբերման կամ ներստեղծման հաջորդականությամբ՝ սկսած առաջին գործարքից:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ երբ փոխանցվում են ֆինանսական ակտիվները, բոլոր նշանակալից ռիսկերն ու հատուցումները:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել, կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ ու ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով (շահույթի կամ վնասի միջոցով): Ֆինանսական գործիքի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին սովորաբար գործարքի գինն է (այսինքն՝ վճարված կամ ստացված հատուցման իրական արժեքը): Սակայն, եթե վճարված կամ ստացված հատուցման մի մասը ֆինանսական գործիքի դիմաց չէ, այլ՝ ինչ-որ այլ բանի դիմաց, ապա Հիմնադրամը պետք է չափի ֆինանսական գործիքի իրական արժեքը: Օրինակ՝ անտոկոս երկարաժամկետ տրամադրած փոխառության կամ դեբիտորական պարտքի իրական արժեքը կարելի է չափել որպես բոլոր ապագա դրամական մուտքերի ներկա արժեք՝ զեղչված համանման պարտքային վարկանիշով համանման գործիքների (համանման՝ արժույթի, ժամկետի, տոկոսադրույքի տեսակի և այլ գործոնների տեսանկյունից) համար շուկայում գերակշռող տոկոսադրույքով (տոկոսադրույքներով):
Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով միայն այն դեպքում, եթե Հիմնադրամն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- ✓ փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- ✓ ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,

- ✓ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- ✓ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը, և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Հիմնադրամի ֆինանսական ակտիվներն, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություններում:

Ընդհանուր առմամբ, Հիմնադրամի բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

➢ <u>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</u>

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած անհավաքագրելիության պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը (365 օրից ավել) ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի անհավաքագրելիության պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է որպես անհավանական, դուրս են գրվում:

➢ <u>Մնացորդներ դրամարկղում և բանկում</u>

Դրամական միջոցների մնացորդները ներառում են դրամարկղում կանխիկ միջոցներ, ցպահանջ ավանդներ (բանկային հաշիվների մնացորդներ)· և դրամական միջոցների համարժեքներ (կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներ, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ):

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ծանոթագրություններում:

➢ Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, այդ թվում նաև որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումները:

➢ Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային կրեդիտորական պարքերը պարտավորություններ են, որոնք հաշվվում են վճարման սովորական պայմաններով և չեն կրում տոկոսներ: Արտարժույթով առևտրային կրեդիտորական պարտքերը վերաձևակերպվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքը: Արտարժույթի փոխարկումից օգուտները կամ վնասները ներառվում են այլ եկամուտներում կամ այլ ծախսերում:

3.10 Սեփական կապիտալ

Հիմնադրամը չունի թողարկվող կապիտալի գործիքներ, և համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

3.11 Հարկեր

Հիմնադրամը հարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է ժամանակահատվածի հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է «շահույթ մինչև հարկումը» հասկացությունից՝ եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Հիմնադրանի ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև:

Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման

ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին (բացառությամբ գործարար միավորումների) այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Հիմնադրամը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են համապատասխանաբար այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.12 Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Հիմնադրամը որևէ պարտավորություն է կրում (իրավական կամ փաստացի), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Հիմնադրամից կպահանջվի կատարել պարտականությունը և այդ պարտավորության գումարը արժանահավատորեն կարող է չափվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտավորությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե պահուստը չափվում է՝ օգտագործելով ներկա պարտավորության մարման համար գնահատված դրամական հոսքերը, ապա դրա հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է այդ դրամական հոսքերի ներկա արժեքը (այն դեպքերում, եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունն էական է):

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Աշխատակիցների չօգտագործված արձակուրդային գումարների չափով ստեղծված պահուստը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճշգրտման միջոցով:

3.13 Արտարժույթ

Արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվել են ՀՀ դրամով՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից սահմանված միջին հաշվարկային փոխարժեքները.

Արտարժույթի տեսակ	31.12.2021 թ-ի դրությամբ	31.12.2020 թ-ի դրությամբ
1 ԱՄՆ դոլար	480.14 ՀՀ դրամ	522.59 ՀՀ դրամ
1 Եվրո	542.61 ՀՀ դրամ	641.11 ՀՀ դրամ

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ որպես այլ եկամուտ կամ ծախս:

3.14 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հիմնադրամը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Հիմնադրամը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Հիմնական միջոցներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)

	Շենքեր	Սարքա-վորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ	Ընդամենը
Արժեքը					
31 դեկտեմբերի 2020	**398,765**	**41,286**	**13,148**	**79,006**	**532,205**
Ավելացումներ	4,503	13,148	-	1,522	19,173
Պակասեցումներ	2,461	162	13,148	3,324	19,095
31 դեկտեմբերի 2021	**400,807**	**54,272**	-	**77,204**	**532,283**
Կուտակված մաշվածք					
31 դեկտեմբերի 2020	**34,710**	**15,343**	**9,890**	**22,038**	**81,981**
Տարվա հատկացումներ	4,951	11,590	-	6,022	22,563
Պակասեցումներ	2,715	162	9,890	5,160	17,927
31 դեկտեմբերի 2021	**36,946**	**26,771**	-	**22,900**	**86,617**
Հաշվեկշռային արժեք					
31 դեկտեմբերի 2020	**364,055**	**25,943**	**3,258**	**56,968**	**450,224**
31 դեկտեմբերի 2021	**363,861**	**27,501**	-	**54,304**	**445,666**

5. Ոչ նյութական ակտիվներ

Հիմնադրամի 80 հազ. դրամի ոչ նյութական ակտիվը ՀԾ հաշվապահական ծրագիրն է:

6. Ապրանքանյութական պաշարներ

ՀՀ հազ. դրամներով	Հումք և նյութեր	Այլ ապրանքներ	Ընդամենը
31 դեկտեմբեր 2020	38,196	41,687	**79,883**
31 դեկտեմբեր 2021	35,511	42,017	**77,528**

7. Դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ

31.12.2021թ-ի դրությամբ Հիմնադրամի դեբիտորական պարտքերը կազմել են 220,708 հազ. դրամ, որից իրացման գծով դեբիտորական պարտքերը կազմել են 35,823 հազ. դրամ, այլ անձանց նկատմամբ դեբիտորական պարտքերը՝ 184,526 հազ. դրամ, բյուջեի նկատմամբ դեբիտորական պարտքերը՝ 359 հազ. դրամ:
31.12.2021թ-ի դրությամբ Հիմնադրամը տրված կանխավճարներ չի ունեցել:

8. Կրեդիտորական պարտքեր և ստացված կանխավճարներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	4,658	1,361
Կրեդիտորական պարտքեր բյուջեին	1,064	277
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	222	-
Կրեդիտորական պարտքեր առհաշիվ գումարների գծով	276	10
Ընդամենը	**6,220**	**1,648**
Ստացված կանխավճարներ	-	-

9. Դրամական միջոցներ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
ՀՀ դրամ՝ դրամարկղում	3,847	94
ՀՀ դրամ՝ հաշվարկային հաշվում	2,090	1,168
Ընդամենը	**5,937**	**1,262**

10. Սեփական կապիտալի տարրեր

Հիմնադրամի սեփական կապիտալի տարրերից է չբաշխված շահույթը կամ չծածկված վնասը, որտեղ արտացոլվում է նրա ձեռնարկատիրական գործունեության արդյունքը՝ տարեկան շահույթը, կամ վնասը:
2020թ-ին Հիմնադրամը ունեցել է 15,036 հազ. դրամի վնաս, ինչի արդյունքում Հիմնադրամի սեփական կապիտալը 31.12.2020թ-ի դրությամբ կազմել են 21,020 հազ. դրամ:
2021թ-ին Հիմնադրամը ունեցել է 2,852 հազ. դրամի շահույթ՝ արդյունքում սեփական կապիտալը 31.12.2021թ-ի դրությամբ կազմել է 23,872 հազ. դրամ:

11. Ստացված փոխառություններ

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Փոխառություն Գ. Մաղոյանից	300	3,963
Ընդամենը կարճաժամկետ փոխառություններ	300	3,963

12. Ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհներ

Հիմնադրամի ակտիվներին վերաբերվող շնորհները վերագրելի են հիմնադրման ժամանակ անհատույց ստացված ոչ ընթացիկ ակտիվներին, իսկ եկամուտներին վերաբերվող շնորհները ընթացիկ ակտիվներինայն:

13. Հասույթ

2021թ-ին Հիմնադրամի 73,547 հազ. դրամի հասույթը ՀՀ քաղաքացիներին կամ զբոսաշրջիկներին մատուցված առողջարանային ծառայություններն են: Համեմատության համար՝ 2020թ-ին Հիմնադրամի հասույթը կազմել է 40,295 հազ. դրամ:

14. Իրացման ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների ձեռքբերում	14,697	8,715
Ծառայությունների ստացում	1,826	1,925
Միջնորդավճար	2,809	-
Ընդամենը	**19,332**	**10,640**

15. Կառավարման և վարչական ծախսեր

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ	28,539	25,753
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և սպասարկման ծախսեր	7,820	5,733
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	340	520
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	7,382	8,552
Աուդիտ և բանկային ծախսեր	500	400
Չփոխհատուցվող հարկեր	1,595	888
Այլ կառավարչական ծախսեր	4,561	2,845
Ընդամենը	**50,737**	**44,691**

16. Հարկեր

	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Միասնական հաշվի և այլ պարտադիր վճարների մնացորդ [1]	Ապառք	Միասնական հաշվի և այլ պարտադիր վճարների մնացորդ [1]	Ապառք
Շահութահարկ	-	-	359	-
ԱԱՀ	-	108	-	279
Եկամտային հարկ	-	161	-	721
Սոցապ վճարներ	-	-	-	-
Գույքահարկ	-	8	-	-
Հողի հարկ	-	-	-	-
Այլ պարտադիր վճարներ	2	-	-	64
Ընդամենը	**2**	**277**	**359**	**1,064**

[1] ՀՀ հարկային օրենսդրության համաձայն հարկերի վճարման և հարկային պարտավորությունների հաշվառման համար ստեղծվել է մեկ միասնական հաշիվ, որին էլ 2020 և 2021թթ-ին կատարվել են հարկային վճարումները, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին կատարվող հարկերի և այլ պարտադիր վճարների:

17. Փոխկապակցված գործարքների բացահայտում

Համաձայն ՓՄԿ ՖՀՄՍ-ի «Կապակցված կողմերի բացահայտում» 33 բաժնի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին, կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Հիմնադրամի կապակցված կողմերն են՝ Հիմնադրամի ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

2020 թ-ին Հիմնադրամի տնտեսական գծով տեղակալ Ռոման Ավդալյանը կարճաժամկետ փոխառություն է տրամադրել Հիմնադրամին, որի մնացորդը 31.12.2021թ-ին կազմել է 300 հազ. դրամ:

Հիմնադրամի տնօրեն Գագիկ Մաղոյանի համար հաշվարկվել է աշխատավարձ 2,801 հազ. դրամի:

18. Պայմանական պարտավորություններ

18.1. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Տնտեսական անբարենպաստ պայմանները և ներդրումների ցածր մակարդակը բացատրվում են 2020թ-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական բախումներով և դրանց հաջորդած հրադադարի ռեժիմի պայմաններով, ներքաղաքական անկայուն վիճակով և իհարկե նույն տարում ամբողջ աշխարհը պառալիզացրած COVID-19 համավարակով՝ պետությունների կառավարությունների կողմից սահմանված կրկնակի արգելափակումներով:
Պետք է ավելացնել նաև՝ որպես զարգացող շուկա Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայրը և համապատասխան ենթակառուցվածքները, որոնք գործում են ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հայաստանի տնտեսության առանձնահատկություններից են՝ բիզնեսի ոլորտում ու տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածությունը, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեկուսացված լինելը համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից:

2020 և 2021 թթ. ընթացքում կորոնավիրուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունները սահմանափակել են գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և դրա հետևանքով ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված և հաշվառված ցոցանիշներին: Իհարկե պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այս խնդիրը շարունակվում է և մնում է օրակարգային 2021թ-ին:

Այս հաշվետվությունները օգտագործողները պետք է իրենց դատողություններն անեն հաշվի առնելով դրանց պատրաստման օրվա և այդ օրվան հաջորդող իրադարձությունները՝ կոռոնավիռուսի և նրա կանխարգելիչ միջոցառումների ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների ցուցանիշների վրա, եթե կլինեն այդպիսիք, որոնք կարող են անհրաժեշտ համարվել: Մասնավորապես այնպիսի հարցերի վերաբերյալ ինչպիսիք են.

- ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը,
- արժեզրկման հետևանքով ակտիվների փոխհատուցվող գումարների գնահատումը,

- փոխառության ծախսումների կապիտալացումը,
- հասույթի գնահատման վերանայումը, անավարտ պայմանագրերի մասով ակտիվների արժեզրկումը,
- վարձակալության ժամկետների գնահատումը:

Ներկա պահին Հայաստանում տնտեսական դժվարությունների բացասական արտահայտման ձևերից են՝ ներդրումների ցածր մակարդակը, ֆինանսական միջոցների արտահոսքը, նվազ եկամուտը, արտաքին ֆինանսական կառույցների միջոցների նվազումը և Սփյուռքից դրամական միջոցների ներհոսքի կրճատումը:
2021 թ-ին Հիմնադրամը ունեցել է բավարար շրջանառու միջոցներ՝ ի հաշիվ մատուցված ծառայությունների:

18.2. Համավարակի ազդեցությունը

2020 թ-ի մարտի 11-ին Առողջապահության Համաշխարհային Կազմակերպությունը (այսուհետ նաև ԱՀԿ) հայտարարեց, որ կորոնավիրուսի տարածումը կարող է բնութագրվել որպես համավարակ:
2020 և 2021 թթ. վիրուսը զգալի ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության վրա: Կազմակերպություններն առնչվեցին կորցրած եկամուտների և խափանված մատակարարման շղթաների խնդիրների հետ: Չնայած նրան, որ որոշ երկրներ փորձեցին մեղմացնել սահմանափակումները՝ մեղմացումը աստիճանական են եղել, և կազմակերպությունների գործունեության ընդհատման արդյունքում միլիոնավոր աշխատակիցներ կորցրեցին իրենց աշխատանքը: Համավարակը զգալի անկայունության հանգեցրեց ամբողջ աշխարհի ֆինանսական և ապրանքային շուկաները: Տարբեր երկրների կառավարություններ ձեռնարկեցին միջոցառումներ՝ տնտեսության տուժած ճյուղերին և կազմակերպություններին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն ցուցաբերելու համար:

Տնտեսական արգելափակումն ազդել է նաև կազմակերպությունների վարձակալության պայմանագրերի վրա: Հայաստանում կորոնավիրուսի տարածման պահից ի վեր ՀՀ Կառավարությունը ներկայացրել է COVID-19-ի հետևանքների չեզոքացման երկու տասնյակից ավել ծրագրեր, որոնցից մի մասն ուղղված են վիրուսի սոցիալական ազդեցության դեմ պայքարին, իսկ մնացած ծրագրերը՝ վիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանը:

18.3. Անընդհատ գործելու կարողությունը և անորոշությունները

Հիմնադրամի 2021 թ-ի ֆինանսական հաշվետվությունները ներառում են համավարակի և հետպատերազմյան իրադարձությունների հետևանքով ֆինանսական ճշգրտումների ազդեցությունը՝ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման օրվա դրությամբ, որը հնարավոր է եղել արժանահավատորեն գնահատել ՀՀ-ում:
Ըստ ղեկավարության գնահատման՝ առկա չեն անընդհատ գործելու էական անորոշություններ:

Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ անընդհատության հիմունքը կիրառելուց առաջ ղեկավարությունը գնահատել է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը՝ բացահայտելով դրանց վերաբերող հարցերը:

Ղեկավարությունը իր պարտքն է համարում նշել. քանի դեռ կան որոշակի անորոշություններ՝ համավարակի, տարածաշրջանային հակամարտությունների և ներքաղաքական իրադարձությունների, առկա են դրանց հետ կապված տարակուսանքներն ու ենթադրությունները, Հիմնադրամը չի կարող վստահաբար հաշվարկել, թե դրանք ինչ չափով կարող են ազդեցություն ունենալ նրա գործունեության, ակտիվների ու պարտավորությունների մնացորդային արժեքների վրա, եթե այդպիսի փաստեր ի հայտ կգային ապագայում և անհրաժեշտություն կառաջանար ճշգրտումներ անել Հիմնադրամի 2021 թ-ի ֆինանսական հաշվետվություններում:

Տես նաև ծանոթագրություն 1.2:

18.4. Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին (կողմերին) պատճառված վնասները:

Գլխավոր տնօրեն
Գ. Մաղոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Պողոսյան

8 հունիսի, 2022 թ.

Կ. Տ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2022 09:53